թեամբ՝ իւր որդուն (չէ հատուցած) հարկերի պատճառով։ Մամուռնի կառավարիչ Թայիր ուղարկեց ապստամբների դէմ Զահիր ի. Սինան Տամիմին բազմաթիւ զօրքով. երկու բանակներ՝ միմեանց պատահելով՝ ճակատեցան մի ամբողջ օր։ Խահակ ի. Սուլէյման իւրայիններով փախաւ, իսկ նորա որդի Զափար ի. Խահակ ի. Սուլէյման գերեցաւ եւ այլ գերեալների հետ ուղարկուեցաւ Մամուռնի մօտ։

Թայիր մնաց (այստեղ) միայն կարճ միջոց. ապա նորա դէմ արշաւեց Աբդուլմալիք ի. Զահհաք Սուլամին, որ՝ ապստամբելով Փայտակարանի բնակիչների հետ հանդերձ՝ պաշարեց Թահիրին Պարտաւ քաղաքում. Թահիր մնաց պաշարուած մի քանի ամիս շարունակ։ Լուր առնելով այս բանի մասին, Մամուռն նշանակեց Սուլէյման ի. Ահմեդ ի. Սուլէյման Հաշիմին կառավարիչ, որ՝ գալով Հայաստան, մինչ Թահիր դեռ պաշարուած էր, ազատեց եւ արձակեց նորան։ Աբդուլմալիք խնդրեց ներումն, եւ խաղաղեցաւ երկիրը։

Մամուռն ապա դրեց Հատիմ ի. Հարզամայ ի. Այանին Հայաստանի վերայ։ Երբ նա այստեղ եկաւ, երկրում խռովութիւն կը տիրէր ազանդաւորների եւ բազմաթիւ կրօնական կուսակցութիւնների մէջ, որոնք մէկը միւսին կոտորելով միմեանց բնաջինջ առնելու մտա էին. ապա հաշտուեցան միմեանց հետ։ Հատիմ ի. Հարզամայ մնաց Հայաստանում միայն կարճ միջոց, որովհետեւ առնելով իւր հօր Հարզամայի մահուան լուրը նա հեռացաւ Պարտաւից եւ բնակեցաւ Կիսալում, ուր նա վերաշինեց ամրոցը եւ ամեն ջանք գործ դրեց ապստամբելու։ Այս նպատակով նա թղթակցեց հայ իշխանների եւ զօրապետների, նաեւ Բաբեկի եւ Խուռամիայի[1] (բնակիչների) հետ,

---

1 Լեռներ եւ նոյն անունի քաղաք Զաբալում, ուր բանակեցաւ Բաբեկ։